ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/4.1-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. փետրվարի 11-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման համար մրցույթին ներկայացվել է 7 (յոթ) հայտ՝

- «Գեղարդի հովտի ագրոտուրիզմի զարգացման» ՀԿ-ի,
- «Արփա» Բնապահպանական Հիմնադրամի,
- «Ազատլուր Մեդիա» ՍՊԸ-ի,
- «Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն» ՀԿ-ի,
- «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ի,
- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի,
- «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՔՈԱՖ)-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 7 (յոթ) կազմակերպության՝

- «Գեղարդի հովտի ագրոտուրիզմի զարգացման» ՀԿ-ի,
- «Արփա» Բնապահպանական Հիմնադրամի,
- «Ազատլուր Մեդիա» ՍՊԸ-ի,
- «Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն» ՀԿ-ի,
- «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ի,
- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի,
- «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՔՈԱՖ)-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- **«Գեղարդի հովտի ագրոտուրիզմի զարգացման» ՀԿ**-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի.

– 9-րդ ենթակետով պահանջվող գործողությունների ծրագրում առկա են «Զբոսաշրջության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետին հակասող գործողություններ, մասնավորապես՝ արշավների կազմակերպումը, գիդի ծառայության տրամադրումը չեն կարող համարվել զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի գործառույթ (**38) զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն**՝ իրավաբանական անձ, որը սպառողին թերթոնների, քարտեզների և գրավոր այլ տեղեկատվական նյութերի միջոցով անվճար տրամադրում է անկողմնակալ և համարժեք տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային գրավչությունների, դրանց տեղակայման վայրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մատուցվող զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ՝ **առանց զբոսաշրջային ծառայություն մատուցելու**.),

– 10-րդ ենթակետով պահանջվող՝ ծրագրի իրականացման ֆինանսական նախահաշիվը իրականացվող միջոցառումների անվանումների, քանակի, միավորի գնի և դրանց համար նախատեսվող ծախսերի՝ նաև համաֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը չի կարող ներառել զբոսավարի ծառայություն:

Միաժամանակ առկա են որոշ անհամապատասխանություններ հրավերի 2.4.1 կետով նախատեսված պահանջներին՝ մասնավորապես. ներկայացված հայտում ներառված չէ

տեղեկատվական կենտրոնի ներսում Հայաստանի զբոսաշրջային Armenia The Hidden Track բրենդի ճանաչելիության բարձրացումը (գովազդատեղեկատվական նյութերի (օր.՝ պրեսս պատ կամ բաններ և այլն) դիզայնը հաստատում է Զբոսաշրջության կոմիտեն):

- **«Արփա» Բնապահպանական Հիմնադրամի** կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի

- 4-րդ ենթակետով պահանջվող՝ նախկին փորձի դեպքում հավաստող պայմանագրեր (ներառյալ հանձման-ընդունման ակտերը և այլն) դրույթի կատարումը թերի է, քանի որ բացակայում են համապատասխան հանձման-ընդունման ակտերը,

- 6-րդ ենթակետով պահանջվող՝ տարածքի սեփականության վկայականը ներկայացված է միայն Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում գտնվող անշարժ գույքի նկատմամբ, իսկ Վայոց ձորի մարզի Արենի համայնքում գտնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն հավաստող փաստաթուղթը բացակայում է,

- 9-րդ ենթակետով պահանջվող՝ գործողությունների ծրագրում, որպես ծրագրի իրականացման վայր նշված է Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքը, սակայն ծրագրում նշված է նաև՝ Վայոց ձորի մարզի Արենի համայնքը:

Միաժամանակ առկա են որոշ անհամապատասխանություններ հրավերի 2.4.1 կետով նախատեսված պահանջներին:

- **«Ազատլուր Մեդիա» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի

- 6-րդ ենթակետով պահանջվող «տարածքի սեփականության վկայական կամ վարձակալության պայմանագիր, կամ տարածքի շահագործման թույլտվություն»-ը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Մասնավորապես՝ իրավաբանական անձանց պատկանող անշարժ գույքի նկատմամբ տիտղոսային տիրապետման (սեփականություն, վարձակալություն, օգտագործում) վերաբերյալ փաստաթղթերը (պայմանագիր, համաձայնագիր) ենթակա են նոտարական վավերացման, իսկ դրանցից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ չի ներկայացվել նոտարական վավերացմամբ համապատասխան փաստաթուղթը և իրավունքների պետական գրանցման մասին վկայականը, ուստի պայմանը չի կարող համարվել պահպանված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՍՊԸ-ն իրենից ներկայացնում է առևտրային կազմակերպություն, ինչը ենթադրում է, որ վերջինս գործում է շահույթ ստանալու նպատակով և սեփական ռիսկով, իսկ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետով նախատեսված է, որ զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը իրավաբանական անձ է, որը սպառողին թերթոնների, քարտեզների և գրավոր այլ տեղեկատվական նյութերի միջոցով անվճար տրամադրում է անկողմնակալ և համարժեք տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային գրավչությունների, դրանց տեղակայման վայրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մատուցվող զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ՝ **առանց զբոսաշրջային ծառայություն մատուցելու:** Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկայացված փաստաթղթերի և ՍՊԸ-ի գործունեության ընդհանուր օրենսդրական նպատակների համակողմանի վերլուծության արդյունքում, այդ թվում՝ ՍՊԸ կանոնադրությամբ հատուկ նպատակների առանձնացվածության բացակայության հաշվառմամբ, հնարավոր չէ վերջինիս ընդհանուր տնտեսական գործունեությունը տարանջատել Հրավերով

սահմանված միջոցառումների իրականացման գործընթացից, ներառյալ հնարավոր չէ վերահսկել համապատասխան միջոցառումների ընթացքում առևտրային գործունեության սուբյեկտի կողմից ծառայությունների մատուցման բացառումը, ուստի ՍՊԸ-ն, ընդհանուր կանոնի համաձայն, ինչպես նաև Հայտով ներկայացված փաստաթղթերի և տվյալների հաշվառմամբ արդարացված չէ դիտարկել որպես զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն:

Միաժամանակ առկա են մի շարք անհամապատասխանություններ հրավերի 2.4.1 կետով ներկայացված պահանջներին. այդ թվում՝ տեղեկատվական կենտրոնի կենտրոնական մուտքի մոտ «Այցելություն տեղեկատվական կենտրոն» տեղեկատվության՝ «i» տարբերանշան և առնվազն 1՝ դեպի տեղեկատվական կենտրոնի ուղղորդող ցուցանակի, «i» տարբերանշանի առկայության դեպքում՝ 2 ուղղորդող ցուցանակի ապահովումը:

- **«Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն» ՀԿ**-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի

- 9-րդ ենթակետով պահանջվող՝ գործողությունների ծրագրի նկարագրությունը ամբողջությամբ չի ներառում հրավերի 2.4.1 կետի պահանջները:

- Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետով նախատեսված է, որ զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը իրավաբանական անձ է, որը սպառողին թերթոնների, քարտեզների և գրավոր այլ տեղեկատվական նյութերի միջոցով անվճար տրամադրում է անկողմնակալ և համարժեք տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային գրավչությունների, դրանց տեղակայման վայրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մատուցվող զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ՝ **առանց զբոսաշրջային ծառայություն մատուցելու**: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկայացված փաստաթղթերի և ընկերության կանոնադրությամբ սահմանված նպատակների ուսումնասիրությունը փաստում է, որ Հրավերով սահմանված միջոցառումների իրականացման գործընթացը ներառում է նաև ծառայությունների մատուցում:

- **«Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ**-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի

- 1-ին ենթպահանակետով պահանջվող ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից (ոչ ուշ քան 3-օրվա վաղեմության) քաղվածքի ժամկետը չի համապատասխանում պահանջին,

- 5-րդ ենթակետով պահանջվող՝ ներգրավվող մասնագետների ցանկը և ինքնակենսագրականները ստորագրված չեն,

- 6-րդ ենթակետով պահանջվող «տարածքի սեփականության վկայական կամ վարձակալության պայմանագիր, կամ տարածքի շահագործման թույլտվություն»-ը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Մասնավորապես՝ իրավաբանական անձանց պատկանող անշարժ գույքի նկատմամբ տիտղոսային տիրապետման (սեփականություն, վարձակալություն, օգտագործում) վերաբերյալ փաստաթղթերը (պայմանագիր, համաձայնագիր) ենթակա են նոտարական վավերացման, իսկ դրանցից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման: Հիմք ընդունելով այն հանգամանը, որ չի ներկայացվել նոտարական վավերացմամբ համապատասխան փաստաթուղթը և իրավունքների պետական գրանցման մասին վկայականը, ուստի պայմանը չի կարող համարվել պահպանված:

Միաժամանակ առկա են մի շարք անհամապատասխանություններ հրավերի 2.4.1-կետին, մասնավորապես՝ հայտում արտացոլված չեն հետևյալ պահանջները՝ Հայաստանի զբոսաշրջային Armenia The Hidden Track բրենդի ճանաչելիության բարձրացում (գովազդատեղեկատվական նյութերի (օր.՝ պրեսս պատ կամ բաններ և այլն) դիզայնը հաստատում է Զբոսաշրջության կոմիտեն), տարածաշրջանում գործող հյուրանոցային տնտեսության օբյեկտների և զբոսաշրջային այլ ենթակառուցվածքների, առաջարկվող զբոսաշրջային երթուղիների, սննդի և ժամանցի կետերի, տրանսպորտային միջոցների, տեղացի գիդերի և զբոսաշրջային գրավչությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, տվյալների բազայի ստեղծում և թարմացում (ամբողջական բազան տրամադրվում է Զբոսաշրջության կոմիտեին) և զբոսաշրջիկներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում, ինչպես նաև Զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգային նյութերի և տարածաշրջանի զբոսաշրջային հնարավորությունները ներկայացնող մարքեթինգային և գովազդատեղեկատվական նյութերի (ինչպես տպագիր, այնպես էլ վիզուալ) ներկայացում և տարածում:

- **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի** կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի

- 1-ին ենթակետով պահանջվող ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից (ոչ ուշ քան 3-օրվա վաղեմության) քաղվածքի ժամկետը չի համապատասխանում պահանջին,
- 4-րդ ենթակետով նախատեսված պահանջը պահպանված չէ ամբողջությամբ, մասնավորապես՝ բացակայում են պահանջված հանձման-ընդունման ակտերը,
- 5-րդ ենթակետով պահանջվող՝ ներգրավվող մասնագետների ցանկը և ինքնակենսագրականները և 7-րդ ենթակետով պահանջվող՝ առկա գույքի և սարքավորումների ցանկը ստորագրված չեն,
- 6-րդ ենթակետով պահանջվող՝ տարածքի սեփականության վկայականի կամ վարձակալության պայմանագրի, կամ տարածքի շահագործման թույլտվության փոխարեն ներկայացված է տեղեկանք,
- 9-րդ ենթակետով պահանջվող՝ հրավերով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխանող պիտանելիության բաժնում բացակայում է ծրագիրը:

- **«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՔՈԱՖ)**-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի

- 1-ին ենթակետով պահանջվող ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից (ոչ ուշ քան 3-օրվա վաղեմության) քաղվածքի ժամկետը չի համապատասխանում պահանջին, կանոնադրությունը չի ներկայացվել ,
- 8-րդ ենթակետով պահանջվող՝ 2025թ. նախատեսվող տեղական ինքնակառավարման մարմինների և/կամ այլ կազմակերպությունների (տվյալ տարածաշրջանում գործունեություն ծավալող զբոսաշրջային ոլորտի բիզնես, հասարակական կազմակերպությունների) հետ համագործակցությունների վերաբերյալ տեղեկատվությունը ստորագրված չէ,

- 9-րդ ենթակետով պահանջվող գործողությունների ծրագիրը չի համապատասխանում 2.4.1 կետին և պահպանված չեն կամ առնվազն ամբողջությամբ արտացոլված չեն կետով նախատեսված պահանջները:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 7 (յոթ) կազմակերպության՝

- «Գեղարդի հովտի ագրոտուրիզմի զարգացման» ՀԿ-ի,
- «Արփա» Բնապահպանական Հիմնադրամի,
- «Ազատլուր Մեդիա» ՍՊԸ-ի,
- «Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն» ՀԿ-ի,
- «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ի,
- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի,
- «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՔՈԱՖ)-ի

կողմից ներկայացված հայտերը:

2. **Լուծարել** Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթը և հայտարարել նոր մրցույթ:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____